

ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ

Արփինե Գեղամի Բիշարյանի «Տեղական ինքնակառավարման սահմանադրականացումը եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում. Սահմանադրաիրավական պրակտիկայի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02- Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Արփինե Գեղամի Բիշարյանի «Տեղական ինքնակառավարման սահմանադրականացումը եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում. Սահմանադրաիրավական պրակտիկայի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսությամբ բարձրացված խնդիրներն արդիական են:

Հեղինակն աշխատանքի ներածությունում հիմնավորում է թեմայի արդիականությունը, սահմանում է ատենախոսության նպատակները, առաջադրում այդ նպատակներին հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Վերջինս սահմանում է նաև ստացվող արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, ներկայացնում է թեմային առնչվող մասնագիտական գրականությունը, ինչպես նաև ատենախոսության նորմատիվ, փորձառնական և մեթոդաբանական հիմքերը:

Աշխատանքի գիտական նորոյթն այն է, որ աշխատանքը տեղական ինքնակառավարման սահմանադրականացման և արդիականացման հիմնահարցերի արդյունքներով համալիր և բազմակողմանի ուսումնասիրություն է, որում սահմանադրական կարգավորումների, եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում, ժամանակակից բնութագրիչներին և ընկալումներին համահունչ, վերլուծության են ենթարկվել տեղական ինքնակառավարման համակարգի կազմակերպման և գործունեության հիմնահարցերը, ուսումնասիրվել են ինչպես պատմական տարբեր ժամանակաշրջաններում տեղական ինքնակառավարման իրականացման առանձնահատկությունները, այնպես էլ՝ ժամանակակից տեղական ինքնակառավարման համակարգերի արդիականացմանն ուղղված միջոցառումները: Արդյունքում, վերլուծության ենթարկելով միջազգային և հայրենական փորձը, կատարվել են ոչ միայն գիտական եզրահանգումներ, այլև ներկայացվել տեղական ինքնակառավարման՝ սահմանադրորեն երաշխավորված և կայացած կառուցակարգերի կատարելագործման, ինչպես նաև զարգացման մի շարք արդարացի և գործուն առաջարկություններ: Տեղական ինքնակառավարման համակարգի արդիականացմանը սպառնացող մարտահրավերների համատեքստում քննարկման առարկա են դարձել այնպիսի հարցեր, որոնք մինչ այդ խորը

ըննարկման առարկա չեն եղել, և որոնց վերաբերյալ միասնական մոտեցումներ չեն առաջարկվել: Ատենախոսության գիտական նորոյթն ուսումնասիրության արդյունքում վեր հանված և գիտականորեն հիմնավորված լուծումների առաջադրմամբ պայմանավորված ընդհանրացված բնույթի եզրահանգումներն ու առաջարկություններն են, որոնք տեղ են գտել ատենախոսության պաշտպանության ներկայացվող դրույթներում, ինչպես նաև ատենախոսական աշխատանքի բուն տեքստում:

Ատենախոսության առաջին գլխում հեղինակը համապատասխան վերլուծության է ենթարկում տեղական ինքնակառավարման առաջացման հիմքերը, ներկայացնում տարբեր հետազոտողների կողմից ներկայացված գիտական մոտեցումներն ու տեսակետները, վերջիններիս կողմից շարադրված ձևակերպումները տեղական ինքնակառավարման վերաբերյալ: Հեղինակը հանգամանորեն ներկայացնում է տեղական ինքնակառավարման էվոլյուցիան՝ վերլուծության ենթարկելով պատմականորեն ձևավորված տեսությունները, դրանց առաջացման պատճառները, զարգացման միտումները և հենքային նշանակությունը տեղական ինքնակառավարման համակարգերի ձևավորման գործում: Հեղինակն անդրադարձ կատարելով տեղական ինքնակառավարման հիմնական համակարգերի վերլուծությանը՝ ներկայացնում է տեղական ինքնակառավարման հիմնական համակարգերը պետությունների օրինակներով, ինչպես նաև իրավահամեմատական վերլուծության է ենթարկում առկա համակարգերի համընդհանուր միտումները:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը ներկայացնում է տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման իրավական հիմքերն ու նախադրյալները, համակարգի զարգացումը տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի համատեքստում, ինչպես նաև վերլուծության է ենթարկում տեղական ինքնակառավարման սահմանադրականացման փուլերը: Հեղինակն անդրադարձ կատարելով տեղական ինքնակառավարման համակարգի կազմակերպման օրենսդրական կարգավորման առանձնահատկություններին՝ ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման իրավական հիմքերն ու կարգը՝ հանգամանորեն վերլուծության ենթարկելով տեղական ընտրական համակարգի օրենսդրական դրույթները: Հեղինակի կողմից անդրադարձ է կատարվում նաև տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցությանը, գործունեության կազմակերպմանը և ուղղություններին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների փոխհարաբերություններին ու դրանց իրագործման ձևերին:

Ատենախոսության երրորդ գլխում հեղինակը վերլուծության է ենթարկում տեղական ինքնակառավարման մասնակցային ժողովրդավարության սահմանադրականացմանն ուղղված գործընթացները, ներկայացնում մասնակցային ժողովրդավարության ձևերը, համայնքի բնակչության ներգրավվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները: Հեղինակն, ընդգծելով համայնքային միավորումների կարևորագույն խնդիրները, ներկայացրել է արդյունավետ մոտեցումներ ու հայեցակարգեր՝ վերլուծության ենթարկելով համայնքային օպտիմալ կառավարման արդյունավետ գործիքակազմի բաղադրատարրերը:

Այդուհանդերձ, առկա են որոշակի նկատառումներ, որոնք հաշվի առնելու պարագայում, մեր գնահատմամբ, կբարձրանա աշխատանքի գիտական և գործնական արժեքը:

1. Հեղինակը պաշտպանության ներկայացվող 1-ին դրույթում նշում է, որ տեղական ինքնակառավարումն ի թիվս այլնի իրականացվում է համայնքի բնակչության

առջև հաշվետվողականությամբ և պատասխանատվությամբ, որպիսի պայմաններում առնվազն վիճելի է, թե ինչու է կայանում հիշյալ պնդման գիտական նորույթը, պայմանավորված այն հանգամանքով, որ «հաշվետվողականությունը» և «սեփական պատասխանատվությամբ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացումը» հանդիսանում են տեղական ինքնակառավարման սկզբունքներ, ինչպես նաև որպես այդպիսին ամրագրված են ՀՀ գործող օրենսդրությամբ: Նման իրավիճակում հեղինակի կողմից բավականաչափ հիմնավորված չէ հիշյալ երկու սկզբունքների առանձնացումը մյուս սկզբունքներից և դրանք որպես տեղական ինքնակառավարման առանցքային տարրի ներկայացումը:

2. Պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթում հեղինակը հանրային ծառայությունների որակի և մատչելիության հնարավորությունները պայմանավորում է ա) ֆինանսական կարողությամբ, բ) տեղական ինքնակառավարման գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությամբ, գ) երկարաժամկետ վերապատրաստման համակարգի ներդրմամբ: Նման իրավիճակում հարցադրում է առաջանում, թե որքանով կարող է հանրային ծառայությունների որակի և մատչելիության հնարավորությունը պայմանավորված լինել տեղական ինքնակառավարման գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությամբ այն դատողության լույսի ներքո, որ հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները, իսկ պետական մարմինները տարբերակվում են տեղական ինքնակառավարման մարմիններից, որպիսի պայմաններում պետական մարմինների գործունեությունը կապել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության հետ առնվազն վիճելի է: Մեր գնահատմամբ «հանրային ծառայություն» ձևակերպման փոխարեն «համայնքային ծառայություն» ձևակերպման կիրառումն առավել կբնորոշեր այն պնդումը, որը մատնանշվում է հեղինակի կողմից:

3. Պաշտպանության ներկայացվող 4-րդ դրույթում հեղինակը խոսում է պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու մասին, սակայն համայնքի առջև ծառայող խնդիրները լուծվում են համայնքային բյուջեի միջոցների հաշվին, իսկ եթե հեղինակը հիշյալ դրույթով նկատի է ունի պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, կամ պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաները և ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաները), ապա հիշյալ դատողությունը բավականաչափ հստակ և ամբողջական ձևակերպված չէ:

4. Պաշտպանության ներկայացվող 6-րդ դրույթում հեղինակը քննարկում է համայնքներում որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների մասնակցության իրավունքը, նշելով, որ համայնքի հանրային հարցերին մասնակցելու իրավունքը ոչ թե շնորհվում է քաղաքացիներին իշխանության կողմից, այլ հանդիսանում է քաղաքացու սահմանադրական իրավունքը, տեղական ժողովրդավարությունը որպես տևական գործընթաց, չի կարող սահմանափակվել միայն ընտրություններով, որպիսի դրույթներն այս կամ այն ձևով արտացոլում են ստացել ՀՀ սահմանադրության մեջ այն դատողությունների սահմանմամբ, որ «ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց

միջոցով»: Ինչ վերաբերում է «տեղական ժողովրդավարությունը որպես տևական գործընթաց, չի կարող սահմանափակվել միայն ընտրություններով» ձևակերպմանը, ապա հարկ է ընդգծել դրա ճշմարտացիությունը սահմանադրությամբ նախատեսված տեղական հանրաքվեի ինստիտուտի լույսի ներքո, քանի որ համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով:

5. Հեղինակը՝ որպես պաշտպանության ներկայացվող դրույթ, մատուցում է այն միտքը, ըստ որի՝ «ՀՀ Սահմանադրության 189-րդ և 190-րդ հոդվածների համատեքստում համայնքների միավորման՝ համայնքային համագործակցության արմատավորման, ծառայությունների և ենթակառուցվածքների միավորման և համայնքային համաչափ զարգացման քաղաքականությամբ հիմնավորվել է միջհամայնքային համագործակցության ուղիները, հասարակական պահանջի և համայնքային շահի երաշխավորման սահմանները:»: սակայն հիշյալ միտքը, ըստ էության, հանդիսանում է հղում ՀՀ սահմանադրությանը և իրենում չի պարունակում պաշտպանության ներկայացվող դրույթին բնորոշ տարրեր և վիճելի է դրա գիտական նորույթ հանդիսանալու փաստական հանգամանքը. իսկ մեր գնահատմամբ՝ հիշյալ դրույթում հեղինակը կարող էր սահմանել այդ ուղիները և սահմանները հեղինակային մոտեցմամբ դրանց հաղորդելով գիտական նորույթի կարգավիճակ:

6. Ատենախոսության եզրակցության մեջ հեղինակի կողմից ներկայացվում է առաջարկ սահմանել ի թիվս այլ պահանջների նաև համայնքի ղեկավարի համար տարիքային շեմ, սակայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասն արդեն սահմանում է տարիքային շեմ քաղաքապետ դառնալու համար, ըստ որի՝ քաղաքապետ կարող է դառնալ 30 տարին լրացած. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող և ավագանու անդամ համարվող այն անձը, որը չունի այլ պետության քաղաքացիություն:

7. Ատենախոսության եզրահանգումների շարքում կան այնպիսի կետեր, որոնցով հեղինակն առաջադրում է նոր խնդիրներ սակայն չի տալիս դրանց լուծումները: Օրինակ՝ 6-րդ համարի ներքո թվագրված կետում հեղինակն օգտագործում է «Նպատակահարմար կլիներ ներդնել և զարգացնել տեղական ընտրական համակարգի ինստիտուտը, դրա կազմակերպման և իրականացման հիմքերը» ձևակերպումը, սակայն չի տալիս հարցի պատասխանը թե ինչպես է պատկերացնում ներդրումը, կամ ինչ է անհրաժեշտ դրա համար: Այնուհետև 8-րդ համարի ներքո թվագրված կետում օգտագործվում է «ուստի, այդ մարմինների հարաբերությունների կոմպենսացիան պահպանելու առումով նպատակահարմար կլինի օրենսդրական կարգավորմամբ համայնքի ղեկավարին ապահովել հակազդման լծակ ավագանու անդամի լիազորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:», սակայն չի մասնավորեցնում, թե ինչ նկատի ունի հեղինակը հակազդման լծակ ձևակերպման ներքո, և կոնկրետ որ գործողությունները կհամապատասխանեն դրան (ինչ գործողություն կարող է անել համայնքի ղեկավարը):


Չնայած վերը նշվածին կարծում ենք, որ՝

1. Արփինե Գեղամի Բիշարյանի «Տեղական ինքնակառավարման սահմանադրականացումը եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում. Սահմանադրաիրավական պրակտիկայի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական.

վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» թեկնածուի ատենախոսությանը ներկայացվող պահանջներին:


2. Ատենախոսության հեղինակ Արիինե Գեղամի Բիշարյանին կարող է շնորհվել ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու



Տարոն Մարգարյան

Տարոն Մարգարյանի ստորագրությունը հաստատում են
Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի ՄՌԿ վարչության պետ



Միլենա Այդինյան